ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

15 հունվար, 2021 թվականի № 5-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, 42-րդ հոդվածի 4-րդ մասով, 44-րդ, 46-րդ, 59-րդ հոդվածներով և 67-րդ հոդվածի 1-ին մասի է) կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1964-Ա որոշման 1-ին կետը և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի 2020 թվականի դեկտեմբերի 8-ի N 46-Լ որոշման հիման վրա անկախ գնահատողի կողմից ներկայացված՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից տեղաբաշխման ենթակա լրացուցիչ բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց վճարվող գույքի շուկայական արժեքի գնահատման N 20/Ա-14, N 20/Ա-15 և N 20/48 ակտերը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է Ընկերության կառավարման մարմինը և Հանրային հեռարձակողի խորհրդին են վերապահված Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող լիազորված մարմնի իրավասությունները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Ընկերության կողմից տեղաբաշխման ենթակա լրացուցիչ բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց վճարվող գույքի շուկայական արժեք սահմանել սույն որոշման № 1 հավելվածում նշված ընդհանուր արժեքը:
2. Ավելացնել Ընկերության կանոնադրական կապիտալը 481,599,502.33 (չորս հարյուր ութսունմեկ միլիոն հինգ հարյուր իննսունինը հազար հինգ հարյուր երկու ամբողջ

երեսուներեք հարյուրերորդական) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ փակ բաժանորդագրության միջոցով լրացուցիչ տեղաբաշխելով 4,530,143.0 (չորս միլիոն հինգ հարյուր երեսուն հազար մեկ հարյուր քառասուներեք) հատ հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային ոչ փոխարկելի բաժնետոմսեր՝ յուրաքանչյուրը 106.31 (մեկ հարյուր վեց ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական) Հայաստանի Հանրապետության դրամ տեղաբաշխման գնով (որը նաև հանդիսանում է յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմսի անվանական արժեքը)՝ միայն Ընկերության միակ բաժնետիրոջ կողմից այդ բաժնետոմսերը ձեռք բերելու հնարավորությամբ (միաժամանակ իր նախապատվության իրավունքի իրականացմամբ):

3. Սույն որոշմամբ սահմանված լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման համար սահմանել եռամսյա ժամկետ, որի հաշվարկն սկսվում է սույն որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրվանից:
4. Սույն որոշման հիման վրա տեղաբաշխվող լրացուցիչ բաժնետոմսերը ենթակա են վճարման ոչ դրամական միջոցներով լրիվ արժեքով այդ բաժնետոմսերի ձեռքբերման համապատասխան պայմանագրի կնքման պահից 1 (մեկ) ամսվա ընթացքում:
5. Սույն որոշման հիման վրա տեղաբաշխվող լրացուցիչ բաժնետոմսերի ձեռքբերման համապատասխան պայմանագիր ստորագրվելու դեպքում Ընկերության լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխումը համարել ավարտված այդ բաժնետոմսերի լրիվ արժեքի վճարման պահից:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

15 հունվար, 2021 թվականի

ք. Երևան